

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրուած են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция „Мелі“.
Կամ Tiflis, Redaction „Mschak“.
Տ է Լ Է Ք օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունուած է ամեն լիզուով.

Յայտարարութիւնների համար վճարուած են
խմբագրութիւնը բացին 2 կոպէկ.
Տ է Լ Է Ք օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԺՐՈՒՆԻ

Վաղը, ամսիս 3-ին, Վաշի մայր եկեղեցում կատարվելու է

ՍՕՖԻԱ ԲԱԼԱԵԱՆ ՄՏԵՓԱՆԵԱՆՑԻ

մահվան քառասունօրեայ հոգեհանգիստը, որի մասին հանգուցեալի որդիները յայտնում են
իրանց բարեկամներին և ծանօթներին:

1—1

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Ուր էք դուք.—Ներքին Տեսչութիւն. Գրի-
գոր Զանչեան. Մամուլ. Նամակ Երևանից. Նա-
մակ Ղարսից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱՐԻՆԵՐ.
—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱՆ.
—ԼՕՆԴՕՆԻ ԿԵԱՆՔԵՐ:

ՈՐԻՐ ԷՔ ԳՈՒԹ

Ամեն անգամ, երբ մեր առաջն է կանգ-
նում ժողովրդական մի խոշոր կարիք, մեզ
զբաղեցնող հարցերից մէկն է լինում այն,
թէ ով պէտք է այդ կարիքը ուսումնասի-
րէ և ով պէտք է օգնէ կարիքին բաւա-
րարութիւն տալու: Պատասխանը հեշտ է.
անշուշտ ազգաբնակչութեան ինտելիգենտ
գասը, որ բնականաբար կոչված է իր վրա
վերցնելու այդ գործը: Սակայն ինչ ծաղր
կրթութեան և բարոյական պարտաւորու-
թեան վրա: Մեր ինտելիգենտ դասի մե-
ծագոյն մասը բնկել է նեղ անձնական շա-
հերի ետեւից և իր ստացած կրթութիւն-
ը դարձրել է մի ուժեղ միջոց միայն իր
սեփական նպատակներ իրականացնելու
համար:

Մի շարք յօդուածներ և թղթակցու-
թիւններ միջոցով պարզվեց, որ մեր ազ-
գաբնակչութեան կարելի է օգնել էական
կերպով, գործադրելով կեանքի մէջ զանա-
զան միջոցներ, օրինակ, կազմակերպելով
արդիւնաւոր ծովային ընկերակցութիւններ,
բանակով փոխադրական դրամարկ-
դեր, բարեօրէն չհարգողութիւնը գիւ-
ղերի մէջ, հիմնելով դպրոցներ և արհես-
տանոցներ, հասցնելով ազգաբնակչութեան
իրաւաբանական օգնութիւն, տարածելով
օգտաւէտ ժողովրդական հրատարակու-
թիւններ, հաստատելով բուժարաններ գա-
ւառում, իսկ այդտեղի միջոցն բանա-

լով թէյարաններ և ճաշարաններ և կազ-
մակերպելով բժշկական օգնութեան գործը:
Այդ բոլորը իրագործելու համար ան-
հրաժեշտ են նախաձեռնողներ և կատա-
րողներ, որոնք մօտ լինելով ժողովրդին և
ծանօթ լինելով նրա կեանքի պայմաննե-
րին, մշակելն գործունէութեան նպատա-
կայարմար եղանակներ և անձնուէր կեր-
պով իրականացնելն նրան կեանքի մէջ:
Ժողովրդական կարիքներին օգնութիւն գա-
լու հարցը պահանջում է տեղական գոր-
ծողների, երկրի զանազան մասերում ցր-
ված մասաւոր ոյժերի գործակցութիւն:

Ներկադրութեան միմիայն ներմուծ-
իր խոսեցած ճառերի մէջ յաճախ կրկնու-
մ է այն միտքը, թէ առանց տեղական ոյ-
ժերի օգնութեան ոչինչ չէ կարող անել
երկրագործութեան միմիայնութիւնը: Ար-
դարեւ երկրագործութեան առաջադրու-
թիւնը պահանջում է, որ ամենախուճ ան-
կիւններում բարձրանայ հողի արդիւնա-
ւորութիւնը. դրա համար անհրաժեշտ
է, որ այդ անկիւնների երկրագործները
սովորեն աւելի լաւ և խելացի կերպով
շահագործել հողը, իսկ այդ նպատակին
հասնելու համար հարկաւոր է, որ սովոր-
ւորեցնող և կազմակերպող ոյժերը չփնչ-
նայ մարդու հետ, որ մշակում է հողը և
վարում անտեսութիւնը:

Սակայն հարցը աւելի լայն է, քան մի-
այն գիւղատնտեսութիւնը: Ժողովրդի հա-
տարակալան, իրականացնող և կրթական շա-
հերը նոյն պահանջն են դնում մեր ա-
ռաջ. Հարկաւոր է լուրջ գործունէութե-
թիւն, որպէս զի ժողովրդը կարողանայ
դուրս գալ իր աղքատութիւնից և չբաւո-
րութիւնից և ապրել խելացի ու հարուստ
կեանքով: Իսկ ուր են այն անձինք, որոնք
պէտք է ժողովրդին օգնութեան գան,

որոնք պէտք է ոգևորվեն և ուրիշներին
ոգևորեն լայն կուլտուրական գործու-
նէութեան համար: Ինտելիգենտ դասը
պէտք է ժողովրդի բարոյական ներկայա-
ցուցիչ լինի: Սակայն նա հրապարակ
չէ գրում այն գրաւիչ և յափշտակող գոր-
ծունէութեան մէջ, որ ուրիշ երկրների
կրթված մարդկանց մոտ է դէպի անձ-
նուէր և անխնայ աշխատանք՝ ժողովրդի
կուլտուրական առաջադրութեան համար:
Ուր է մեր երկրի ինտելիգենտը, որ պէտք
է կազմէր «երկրի աղը»:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳՐԻԳՈՐ ԶԱՆՇԵԱՆ

Ռուսաց ազատամիտ ինտելիգենտի, հոկ-
տեմբերի 4-ին, երկուշաբթի օր, տօնում է ու-
սաց յայտնի հրապարակախօս և մեր հայրենակից
Գրիգոր Զանչեանի գրականական գործունէու-
թեան ըստնհիշումները յայտնում:

Մի քանորդ դար շարունակ համակրելի և չը-
նդհատելի հրապարակախօս ծառայեցիք է իր
ոյժերը, գրելով իր բոլոր ոյժերը, պաշտպանելու
և ժողովրդականացնելու Ազգայնական II-ի մեծ
բէֆօրմները—ուսումնական և ամբողջ Ռու-
սաստանի առաջադիմութեան այդ շինարարը—
և պաշտպանել է զարմանալի եռանդով և մեծ ա-
շխուհիւմով. այդ մասին կարելի է զգալիոր
կազմել այն հաղորդագրութեան մէջ, որ
դու առաւ ընդունող հասարակութեան զանազան
խաւերում յօդուածներ ամենախելացիոր գրուած-
քը՝ «ИЗЪ ЭПОХИ ВЕЛИКИХЪ РЕФОРМЪ» գիրքը:

Ռուս ինտելիգենտի այն մասը, որ հաւա-
տարիմ է մնացել քառասունական, վախճանական
և եօթնասական թվականների իդէալներին,
չէր կարող չը գնահատել այդ ազնիւ, անձնուէր
և արդիւնաւոր ծառայութիւնը, և անա յայտ
նա վարձատրում է ազատամիտ հրապարակա-
խօսին համակրութեան և յարգանքի անկեղծ
արտայայտութիւններով, որոնց ծայրակից կը
լինէր, պէտք է յուսար, նոյն իսկ ուսումնասիր-
ական ժողովուրդը, որովհետև յարգելի ընթերցողը ա-
ռանձին շնորհ ունի միայնակ զաւարտական
պրօպագանդան մարդասիրական գործունէու-
թեան հետ. դժուար է գտնել ներքին Ռուսաս-
տանի մի գաւառ, որտեղ ոչ մի ժողովրդական
գրադարան, ոչ մի տարրական դպրոց, ոչ մի
սովետանիշ կամ հրկիզակ գիւղ նպաստ ստա-

յաւ չը լինի «ИЗЪ ЭПОХИ ВЕЛИКИХЪ РЕФОРМЪ»
գրքի արդիւնքից:

Լուս չէ կարող մնալ այսօր և առաւայ ին-
տելիգենտի, ինչպէս լուս չէ մնացել երբեք
ուսումնասիրող ինտելիգենտների գաղափա-
րական հանդէսներին, որովհետև նրանք մեր
զաւարտական եղբայրակիցներն են և նրանց
համակրելի ներկայացուցիչների գործունէութիւ-
նը անմիջապէս կամ միջնորդապէս միշտ բարե-
բար է եղել մեր ժողովրդի համար:

Սակայն այդ բարոյական կապը, այդ համե-
րաշխարհակցութիւնը աւելի ևս մեծ ոյժով պիտի ար-
տայայտվի այժմ, երբ Ռուսաստանում տօնվում
է մի հրապարակախօսի յօդուած, որ հայ է ծա-
ղուծով, որ հայ է եղել միշտ զգացմունքով և
որ այժմ, մի քանի տարիներից ի վեր, հայ է և
գործով ու հաղորդագրութեան հայ:

Մենք միշտ մի տեսակ հաճոյքով էինք լսում,
երբ ուսանելու համակրութեամբ էին խօսում
Զանչեանի մասին և աւելացնում վերջը, «Նա
էլ հայ է».—«Այո, հայ է, հայ», հաստատում
էինք մենք, որ այնքան յաճախ սովորված էինք
լինում լսել ուսումնասիրական մէջ և կար-
գալ ուսաց թերթերում զանազան հայ շարչի-
ների, վախճանների և հին ու նոր տիպի խա-
չագոյների շահատակութիւններ մասին:

Այդպէս էր առաջ, երբ մանկութիւնից օտար
(վրաց) շրջանում կրթված և այնուհետ օտար
միջավայրում ապրած հրապարակախօսը դեռ
չէր կատարել իր պարտականութիւնը դէպի իր
մայր հայրենիքը: Բայց վրա հասան սարսափելի
տարիներ իրանց չը տեսնված աղէտներով, ո-
րոնք հնչեցին հայկական լարերը աշխարհիս
բոլոր ծայրերը ցրված տարազիւր սրտերում, և
առաջին արձագանք տուողներից մէկն եղաւ
Գրիգոր Զանչեան, որ այնուհետ բոլորովին
նուիրվեց իր թշուառ եղբայրակիցների վիճակի
բարեօրէն:

Իր «Положение Армянъ въ Турціи» և
«Братская Помощь» հրատարակութիւններով
պ. Զանչեան ոչ միայն համակրութեան սերմեր
ցանց դէպի մեր թիւրքաշայ եղբայրների դու-
թիւնը ուսումնասիրական կարծիքի մէջ, այլ
և ծանօթացրեց ուսումնասիրողներին հայ ժո-
ղովրդի իսկական բարոյական պատկերի հետ,
որ պատիւ կարող է բերել և աւելի մեծ ու ա-
ւելի նպաստաւոր հանգամանքներում ապրող
ժողովրդի:

Սակայն դրանով չը բաւականացաւ Զանչեան,
այլ իր սովորութեան համաձայն, միացնելով

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԼՕՆԴՕՆԻ ԿԵԱՆՔԻՑ

(Իմ տպագրութիւնները)

I

Լօնդօնը նորեկին նախ և առաջ ապշեցնում
է իր շարժումով, իր կենդանութեամբ, իր ազ-
մուկ իրարանցումով: Եւրօպական ոչ մի մայ-
րաքաղաքում—ոչ Պարիզ, ոչ Վիեննա, ոչ Բեռ-
լին, ոչ նոյն իսկ Նիւ-Յօրք—դուք չէք հանդի-
պի մի այնպիսի սաստիկ շարժման, որտեղն-
դուք չէք հանդիպի մի այնպիսի փողոց-
ներում վաղ առաւօտեանից սկսած մինչև ուշ
գիշերը:

Առաջին անգամ այդ քաղաքը մուտք գործե-
լիս դուք զարմանում, ապշում էք, անկարող լի-
նելով ձեզ հաշիւ տալ թէ ուր էք ընկել, ինչ
է ձեր լուսը: Զանազան ձայներ, տարբեր տա-
րբեր հնչելներ, թնդիւն, գոչիւն, չվիւն, ճիւ-
ղաղալ... իրար խառնելով, իրար հետ միա-
նալով կազմում, յօրինում, ստեղծում են այն
աննկարագրելի խուլ, բայց մեծաշուք և հան-
դիսաւոր դրդող-որոտմունք, որ թաղաւորում
է այդ բազմամարդ վիթխարի մայրաքաղաքում:
Մարդիկ, մեծ ու փոքր, շտապում, վազում են.
կառերը արագընթաց սլանում, թռչում են...
բոլորն էլ կարծես, հրեհի կամ թալանի են

վազում... Ինչ չփոխ է այդ, ինչ կայ, ինչ է
պատահել: Առանձին ոչինչ—պատասխանում
է ծանօթը. դա Լօնդօնի սովորական կեանքն
է... Սրան-սրան հրելով և հրվելով դուք շա-
րունակում էք բայել, ճեղքելով ամբողջ մի
կերպ հասնում էք մեծ, բարձր օմնիբուսներից մե-
կին, բարձրանում նրա վերին բացօդայ յարկը,
որտեղից ձեք առջև բացվում է մի տարօրինակ
զեղեցիկ տեսարան: Դա կենդանի էակներից
բաղկացած մի մեծ գետ է՝ անվերջ, անձայր,
որ աղմկալից գոտում-գոտումով հոսում է արագ-
ընթաց իր բարձր ափերի՝ տներով միջով... Խիտ
առ խիտ լցված օմնիբուսներին, ֆիակներին,
մանուսանդ միանիւ և միմիայն սրբութեան
կառերին—բէրերին—թիւ, համար չը կայ:
Շարժումը այնպէս սաստիկ, այնպէս ապշեցու-
ցիլ արագ և անհղհատ է, որ մի տրոտուարից
միւսն անցնելու համար յաճախ ստիպված էք
լինում սպասել, որ ոտակաւոր ձեզ ուղեկցէ:
Տասը քսան րօպէ ընդմիջումներով կառերի այն
երկար շարքը, տրոտուարների մէջ գտնված
այն ամբողջ մասան յանկարծ ոտակաւոր մի
ձեռքի շարժումով—կախարդական շարժում—
կտրվում է և երկու մասի բաժանված կանգ-
նում: Ոտակաւոր ձեռքը պարզած լուս ու մունջ
կանգնած է փողոցի միջում. այդ ձեռքը վրա
են յառած կառապանները իրանց աչքերը. նրա
միւս ձեռքի շարժումներով սպասող հետևակ-
ները շտապով փոխվում են փողոցի մի կողմից
միւսը: Պարզած ձեռքը իջնում է թէ չէ, կառ-
երը նորից շարունակում են սլանալ:

Օղբ լցված է հազար ու մի ձայներով. կա-
ռապանների գոտում-գոչիւնները, մարակների
շառաչումը, կառերի դրդողը, վերսկզբների
զանգակների հնչիւնները խառնվում են տրո-
տուարների վրա վիտող մանրավաճառների և
այլ անձանց բացականչութիւնների հետ: Մի
քանի քայլ հեռուից փողոցի աղանքը, կռների
տակը թնդելով լցրած՝ բարձրաձայն յայտա-
բարելով երկրաջնդիս զանազան առկիւններից
եկած օրվայ նորութիւնները, գնող և գնող են
հրաւիրում և ալ ու ձայն ծախում...
Ներկայեան դէմ շարժումը՝ աւելի լայն ծաւալ
ընդունելով, դառնում է աւելի կենդանի, աւելի
աշխույժ, աւելի ուժգին, դրդողուն՝ աւելի մե-
ծահնչիւն, աւելի օրորել և մոլեգին: Մեծ, պայ-
ծառափայլ փողոցներում, մանաւանդ էլէկտրա-
կանութեամբ լուսաւորված, շքեղ դարձած, կո-
կած մագաղաններով լի փողոցներում, դա մի
հանդիսաւոր դրաց է, մի հսկայական վեճ ցոյց,
որ մի աներկունք ձեռք ամեն բան որոյնը, կարգել,
կանոնաւորել է... պակաս են միայն սովորական
դրօշակները... Նոյն այդ վայրկեանին թատրոն-
ները, Լօնդօնի վեց հարիւր թատրոնները, նոյն-
պէս լիւիւթեցում վիտում են հասարակութեամբ...
Դուք հիացած, զմայլված էք այդ հոգր շարժու-
թեան, այդ աշխույժ, կենդանի գործունէութեան
վրա: Մարդիկ շտապում, վազում են. ամեն մի
րօպէ թանգ է մեզ համար... Դուք միայն այդ-
տեղ շրջելով, ապրելով են գրում, ըմբռնում,
գնահատում ձեր րօպէները, որ դուք վառնում
էք այնպէս շաղաքաւոր, անխալաքաւոր...

Նոյնպիսի կենդանի շարժում է և Քէմպլի վը-
րա, ուր փողոցի շրջանները օձապտոյտ ըն-
կացքով կտրում, սլանում են զանազան ուղղու-
թեամբ: Գետը կանոնաւորած, յարմարեցրած է
նաւագնացութեան: Նրա երկու ափերին բարձ-
րանում են ամուր և լայն պարիսպներ, պա-
րիսպներ, որոնք մօտ քսան վերտ երկարու-
թիւն ունեն: Ի դէպ, յիշեք այստեղ Լօնդօնի
տարածութիւնը: Երկաթուղու Զէրիդ-Կրօս կա-
յարանը քաղաքի կենտրոնն է, որի շաւառի դ-
ները քսան և չորս կիլօմետրի են հաս-
նում... Մի մոռանալ, որ այժմ Լօնդօն ունի
մօտ վեց միլիօն բնակիչ. ասել է այնչափ, որ-
չափ բովանդակ Բէլգիան իր Բրիւսէլ, Անտվեր-
պէն և այլ քաղաքներով ու նահանգներով...
Թէմքի երկու ափերը միացրած են տասն և ութ
կամուրջներով, իսկ գետի յատակի տակից՝ երեք
տօնիկներով: Թէ ինչ շարժում է տրոտում այդ կա-
մուրջների վրա, յիշեք, որ միմիայն «Լօնդո-
նեան» կոչված կամուրջով օրական անցնում են
170,000 հետևակ և 20,000 կառք... Լօնդօնի
նաւահանգստի երկարութիւնը տասը կիլօմետրից
աւել է. սրանից դուք կարող էք մի հեռաւոր
զաւարտ կազմել այն անթիւ, անհամար նա-
ւերի մասին, որ խռնված են Քէմպլի վրա. կայ-
մերի մի ամբողջ անտառ է դա: Դրանք եկել
են զանազան երկրներից՝ հեռու Աւստրալիա-
յից, Հնդկաստանից, Նիդրլանդից, Հարաւային
Աֆրիկայից, Կանադայից... երկրագնդի այն
բազմաթիւ կէտերից, ուր ծածանում է բրիտա-
նական խրոխտ առկը, Միացեալ-Նահանգնեան

պրօպագանդան մարդասիրութեան հետ, յատկապէս «Братская Помощь» գրքի արդիւնքը յօգուտ թիւրքաշայ նահատակներէ որբերի, որոնց համար հինից մի քանի առանձնական որբանոցներ և որոնց օգտին շարունակուած է նպաստներ ժողովել զարմանալի անձնութիւններով, ուշադրութիւն չը դարձնելով պատկերի և դաւաճանութեան գրականութեան հերոսները անամօթ յարձակումներին և չը խնայելով ոչ միայն իր գրեթէ ամբողջ ժամանակը, այլ և իր ինքնասիրութիւնը, որովհետեւ յաճախ պատահուած են հրէշներ, որոնք մուրացկանի նման են ընդունուած փող հանգանակողներին, չը հաշուելով դեռ նրանց, որոնք դժուարութեամբ են թաղցնում իրանց զօգոհութիւնը պ. Ջանչեանի «վերադարձը վայելելով այնքան թիւններով», ինչպէս սրբափառ է մէկը:

Սրանք են այն բարիքի և բանականի սերմերը, որ պ. Ջանչեան ցանկ է իր գործունէութեան ընթացքում, և այսօր ահա երկու ժողովուրդը միացած յայտնուած են նրան իրանց սրտազին շնորհակալութիւններով, որոնց մէջ ամենախաղաղատիչն է լինելու անշուշտ հայ որբերի, այդ սրբազան որբերի թոթովանքը:

Թող այդ անկեղծ ցոյցները նոր ոյժ տան մեր յարգելի յօգեւարին շարունակելու և իր տրամաբանական եզրակացութիւններին հասցնելու իր համակերկի գործը:

Տ. Յովհաննիսեան

Ժընեվ.

Մ Ա Մ Ո Ւ Լ

Մեր գաւառական ճահիճները կարող են յուսահատութիւն պատճառել նոյն իսկ անուղղելի օգուտիստներին: Մեր լրագրի էջերում համարեա ամեն օր հեծում է գաւառական գանգատաւոր ձայնը, որ շարունակ կրկնուած է թէ մարդ չը կայ, բարի գործերի ձեռնարկութիւն չը կայ: Դատարկութիւն, ինչպէս վայել է իր կաշուի հարցի մէջ մինչև զուլիւ թաղված մարդկութեան, անշարժութիւն, ինչպէս վայել է բորբոսանի ճահիճներին: Մի այդպիսի հեծածանք էլ արձակուած է «Тифл. Источек» լրագրի Շուշու թղթակցից:

Մոյլ և միանման է անցնում կեանքը մեզ մօտ: Չը կայ մեզանում լուրջ գործ, չունենք և խեղացի զուարճութիւններ, որոնք կարողանային գտնել ժամանակաւորապէս արթնացնել ընթացական շուշուները:

Բայց չը կարծէք թէ դա կաֆրներն մի երկիր է: Լուսաւորութիւն, կրթութիւն կայ այնտեղ, գտնէ այն լուսաւորութիւնը, որի մասին վկայում են վերջին մօղայով կարած շորերը, թաշտներով զարդարւած զինարկները, որ կրում է Ղարաբաղի մայրաքաղաքի գեղեցիկ սեռը: Նոյնը կը գտնէք և տղամարդկանց մէջ: Բայց ինչ օգուտ: Փաղաքը, այնուամենայնիւ, ներկայացնում է մտաւոր մեղմութեան տեսարան: Մարդը շորերով չէ մարդ, այլ մարդկային գործերով: Իսկ այդ կողմից Շուշին, ինչպէս և ամեն մի գաւառական քաղաք, անապատ է: Չեն ուզում որ լաւ գործ լինի—և այդ չը կա: Ժողովուրդը ամեն ինչ վեճում է:

Սթէ մէկը մտածում է մեր կեանքի մէջ

Րից, եւրօպական բոլոր նաւահանգիստներէ: Թէմըդ այն օղակն է, որը կապում, միացնում է այդ համաշխարհային մայրաքաղաքը ինչեւէ երկրների հետ...

Թէմըդ հոսում է ոչ արագ և ոչ անշաղի դանդաղ: Նրա ալիքները հանդարտ, բայց ոչ ոլորմալոր, այլ իր գաւառների նման հաստատ և անշողողող: Նա, բանաստեղծի ստեղծելով

Though deep, yet clear, though gentle, yet not dull
Strong without rage; without o'overflowing full.

Հիանալի է նա մանաւանդ երեկոյեան. մի հրաշալի պատճառ է դա: Ցամաքի հազար լապտերներով լուսաւորված ափերը ձգված են առջևը աջ ու ձախ. գետնի վեր գնալով, գնալով նրանք կորչում են հեռու, հեռու, մի անընթաց ինքնաբերական մէջ և մի գեղեցիկ, մի չքնաղ տեսարան ներկայացնում: Եւ այդ հեռուից բարձրանում է Լօնդօնի ոչ պակաս մեծաշուք շարժման խորտա որոտները... Գետի քաղցրաշունչ, զովարար գեփուրը երեկոյեան այդ խորհրդաւոր պահունքը թել շոյում, զգվում է... Յափշտակված երկար, երկար նայում են, նայում և չեն կշտանում այդ դիւթիչ անմոռաց պատկերից:

Այդպիսի արագ շարժում, կենդանութիւն, աղմկալից խօսք, բայց կարգ-կանոնի ենթարկված խօսք, չփոթ փողոցներում, հրապարակներում. իսկ ինչ է կատարվում ներքե՛ Լօնդօնի գետնի խորքում, փողոցների տակ:

լոյս մտցնել, նա շատ արգելքներ կը գտնի այն մարդկանց կողմից, որոնք հասարակութեան ղեկավարներ են հանդիսանում և աշուտանում են առաջադր մարդիկ. դրանք, ինչպէս և Կովկասի միւս քաղաքներում, պարագայ, կուշտ բուրժուական են, ամեն մի լաւ, բարի և աշխու գործի հակառակորդներ:

Այդ մարդկանց անտանելի լուծը շատ վաղուց է ծանրացած Շուշու վրա, որ մեր գաւառական քաղաքները մէջ մի առանձին տխուր հուշակ է ստացել իր խաւար կուրծքով և յաճախ լուսավարութեամբ Պարագլութիւնը Շուշու «մեծամեծներին» անբանութեան է հասցնում. նա մեղմութեամբ է ամեն մի մտաւոր ընդունակութիւն, և որովհետեւ անբանական կը լինէր որ մարդը կատարելապէս պարագայ լինելով, կատարելապէս կենդանութեան ոչ մի նշան չը ցոյց տայ, ուստի այդ «առաջադրները» մէջ զարգացել է միայն լեզուն, չարախօսութեան այն գործիքը, որ կարող է զբաղեցնել ամեն ինչից երես դարձած և ամբողջապէս ստամոքս դարձած մտակոյտներին:

Ինչ տեսակ բաժանումներ և առասպելներ ասես, որ չեն հնարում նրանք: Նոյն իսկ այն հանձնարանը, որ քաղաքում մի հատիկ զրադարան-ըմբերքաւոր յաճախում են և օրիորդներ, առիթ է տալիս նրանց զանազան լիբր ակնարկներ անել:

Իսկ շատ ընդունի է մի քաղաքի համար, որ յաճախութեամբ ուղում է վայրերի, անկրթ մնալ: Ճահիճը կազմված է մի տեղ հաւաքված հոտած ջրերից. և թէ գաւառական ճահիճների մէջ ամենից հոտածը, ամենից դարձաւոր այն է, որին ճակատագիրը տուել է Ղարաբաղի մայրաքաղաք լինելու պատիւը, դրա պատճառը չէ՞ց այն է, որ գիրքն ու հասարակական օգտաւէտ հիմնարկութիւններ լիբր ակնարկութիւնների առարկայ են դառնում: պարագայ անբանութեան կերակուր տալու համար: Բայց թող Շուշու օրիորդները սովորեն արհամարհել լրբութիւնը, դա ամենալաւ միջոցն է լոկ կենդանաբանական հետաքրքրութիւն ներկայացնող մտակոյտներին ոչնչացնելու համար...

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Սեպտեմբերի 27-ին

Անցեալ կիրակի Պօղոս-Պետրոս եկեղեցում իր հրաժեշտի բարոյի խօսքը Ներսէս եպիսկոպոսը, որ նշանակված է Բնադրաբարձի թեմի գլուխը: Նրա տեղը գալու է, ինչպէս հաւատացնում են, Սուրբաս եպիսկոպոսը: Սրանցիցները այդ երկուսին էլ լաւ ճանաչում են, այնպէս որ յանձնարարականները բողոքովին աւելորդ են...

Թեմական դպրոցի տեսուչ է ուղարկված Բենիկ վարդապետը, այն էլ լիազօր իրաւունքներով: Ասում են, մինչև Վեհափառը չաւելացրեց կօնդակի մէջ «լիազօր իրաւունքներով» բառերը, չայր սուրբը չը համաձայնվեց զաւ. բայց թէ վարդապետ-տեսուչը ինչպէս է հասկացել այդ բարերը, ահա մի փոքրիկ օրինակ: Թեմական դպրոցի ուսուցչական խումբը, Գեորգեան ձեռնարանի 25 ամսակի առիթով, մի արժանապատ արժամ է պատուիրում Վանից գաղթած

Այն ինչ Պարիզ մի տեղ գնալու համար հարկաւոր է լինում կառնով ամբողջ ժամեր գործածել, այստեղ՝ Լօնդօն, ստորերկրեայ երկաթուղու գնացքներով քաղցներ են տեսում: Այդ երկաթուղու ցանցով ծածկված է Լօնդօնի գրեթէ ողջ առկը: Նրա կայարանները, թուով 659, գտնվում են քաղաքի զանազան կետերում: Մօտենում էք մի յարկալի տան, որ ծուխ և մօլ-խից սկսեցել է, ինչպէս Լօնդօնի առհասարակ բոլոր տները. դա ստորերկրեայ երկաթուղու կայարանն է. վճարում էք մի քանի պէնս *), տոմսով տեսնում, ապա երկար սանդուղքներով իջնում սեռեւ գետնի խորք՝ տօնելի մէջ: Սրկու պլատֆորմ լուսաւորված են, որոնց արանքում երկաթուղու գծերն են: Սկսեցած պատերը գրեթէ ամբողջապէս ծածկված են արջիմանոց տաւերով՝ ապա յայտարարութիւն-երկաթմանքով. պլատֆորմից ասպակաւ են կիտեցները, ուր ի վաճառ են դրված Լօնդօնի բոլոր պարբերական հրատարակութիւնները և գրքերը: Գնացքները 2—3 քաղէ ընդմիջումներով գալիս են, ձաժբորդներն մի մասը վայր գնում, նորերն ընդունելով՝ անմիջապէս գնում զանազան ուղղութեամբ: Պատմութիւնների վրա խոշոր թաղմութիւնը քաղէ առ քաղէ փոխվում, նորագվում է: Դու սպասում ես քո գնացքին. մի քաղէ ևս և ահա փքվելով, ճալով, գողողալով գալիս է և այդ գնացքը. կանգնելու ժամանակ չէ այլ ևս, շտապ քայլերով վազում, նետվում ես վազօն-րից մէկի մէջ. փոքրիկ և ցածր, բայց շատ յար-

*) Պէնսը հաւատար է մօտ 4 կօպ.

մի ոսկերիչի, որի եղբայրը ձրիավար չաւ-կերտ է թեմական դպրոցում: Այրօք վերջաց-նելուց յետոյ վարձատրութեան մասին սակար-կութիւն է սկսվում ուսուցչական խմբի (15—20 հոգի) և խեղճ ոսկերիչի մէջ. բացի այն, որ մեր «ղօշաղ» վարձապետները յայտնում են, թէ պէտք է բոլոր գաղթականները կոտորված լինէին, նրանք վերցնում են ալթօք, տանում պօլիցիա և մի մեծ գործ դարձնում, փոխանակ 50-ական կօպէկ կամ մի-մի բուրլի աւելի վճարելու, որով չանված կը լինէր թէ արհեստաւորը և թէ ի-րանց վարձուները քաղաքին տրտուշի առիթ չը լինի: Իսկ Բենիկ վարդապետը, օգտվելով իր լիազօր իրաւունքից, արձակում է ոսկերիչի ձրիավար իրաւունքը, ասելով՝ «թէ քո եղբայրը այդպէս է վարվում, տուն գնա և մինչև 30 բուրլի թոշակ չը բերես, դպրոց չես դառն: Թեմական դպրոցը ունի հոգաբարձութիւն, որը մտնելով ոսկերիչի դրութեան մէջ, ձրի ընդունել է նրա եղբորը. յանկարծ նոր տեսուչը, առանց հոգաբարձութեանը յայտնելու, արձակում է այդ աշակերտին: Չենք հասկանում թէ ինչ կապ կայ ուսուցչիների մասնաւոր մի առևտրի և ձրիավարութեան խնդրի մէջ և կամ ինչով է մեղաւոր մի խեղճ մանուկ, եթէ մինչև ան-դամ նրա եղբայրը կամ նոյն իսկ հայրը մի մեծ ոճիւր է գործել: Եթէ այս կերպ առաջնորդվի վարդապետ տեսուչը, այն ժամանակ շուտով, երևի, կը կարգադրվի, որ ձրիավար չաւկերտի արհեստաւոր հայրը կամ եղբայրը ձրիաբար ծա-ռայեն ուսուցչիներին: Բայց երևանցիները Բե-նիկ վարդապետին էլ ճանաչում են: Եւ յանձ-նարարականները դարձեալ միանգամայն աւե-լորդ են...

Ա.—Իօ.

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՑ

Սեպտեմբերի 27-ին

Երէկ, ամսիս 26-ին, մի խումբ նախկին ձե-մարանականների նախաձեռնութեամբ, Գեոր-գեան ձեռնարանի 25-ամսայ տարեդարձի առի-թով հոգեհանգիստ կատարվեց Գեորգ IV կա-թողիկոսի համար: Գեորգեանի վրա դրված էր մի պսակ. խօսեցին Խորէն քահանայ Ստամպոլ-ցեան և պ. Սողոմոնեան: Ճառախօսների մէջ ոչ մի ոգևութիւն, ոչ մի զգացմունք չը կար. մա-նաւանդ պ. Սողոմոնեան աշակերտի նման լիա-էր տալիս, աշխատելով մի կերպ վերջացնել իր գրուածքի ընթերցումը: Հոգեհանգիստի ժամա-նակ եկեղեցում քաղմութիւն չը կար, որի բաղ-մաթիւ պատճառներից մէկն էլ նախաձեռնող-ների անհոգութիւնն էր, որ վաղօրօք յայտարա-րել չէին ժողովողին:

Իմ կարծիքով, այս անտարբերութեան պատ-ճառներից մէկն էլ այն է, որ ձեռնարանը իր 25-ամսայ գոյութեան ընթացքում ոչ միայն հիմ-նադրի նպատակին և ազգի շահերին չէ ծառա-յել, այլ կարծես, քիչ բացառութեամբ, դիտա-մամբ միշտ սխալ, միշտ կերպարմաւ ուղղու-թեան հետեւելով, խեղդել է իր մէջ ամեն բան՝ ինչ ազնիւ է, ինչ ճշմարիտ է և առաջադիմա-կան: Այս ընթացքի շնորհիւ է, որ այսօր հասա-րակութիւնը, փոխանակ ձեռնարանի յօգեւանը

մար վազօններ: Այն կամ մի քաղէ միայն մնա-լուց յետ գնացքը սուլելով տեղից շարժվում է. կօնդուկտորը շրմակ, շրմակ փակելով վազօն-ների դռները՝ ինքն էլ մտնում է գնացքի վեր-ջին վազօնը: Եւ ահա մենք երկար ու ձիգ, մոլթ, խաւար տօնելի մէջ, թռչում ենք: Կի-տեղ ենք, ուր ենք գտնվում, քաղաքի ուր մասի տակ, ոչինչ չը գիտեմ: Գնացքը կանգ է առ-նում մի վայրկեան, կօնդուկտորը գոռում է կայարանի անունը. ձաժբորդները իջնում են, մարդկանց մի նոր հոսանք է ներս գլորվում: Կրկին լծակ, շրմակ, դռները փակվում են, նորից թռչում ենք. դպրոցը, խաղաղօցի սուրօց, գնացքները կայածակնեթաց սլանում են վերի մօտով... Տեղ-տեղ արժանանում ենք Աստուծոյ լոյսին. ապա կրկին մոլթ, աղմուկ, ծուխ... կրկին նոր կայարան, մարդկանց նոր հոսանք, նոր դէմքեր, կրկին դռները բերելով, կրկին ծուխ, մոլթ. նոր և նոր գնացքներ սուլելով, ճալով, որոտալով թռչում են մեր մօտով... Մենք անցնում ենք քաղաքի զանազան մասերի տակով. մեր գլխին են ահալին տներ, ահալին հիւրանոցներ, մեր գլխին են լեփ-լեցուն, հասա-րակութեամբ, կաղերքով ծայրէ ի ծայր լիբր փողոցները և հրապարակները, մեր գլխի վրա-յով են, ալիքները հանդարտ ոլորելով, հոսում Թէմըդ գետը՝ ծանրաբեռնված իր վիթարի շոգե-նաւերով և հաղարաւոր մակոյկներով... Քսան-երեսուն քաղէ այդպէս արագ սլանալով դուք կտրում, անցնում էք ահալին տարածութիւն, որ կառնով ժամեր պիտի տևէր: Դուրս էք գա-

ողևորութեամբ և շքեղ կերպով տօնելու, ամե-նակն չէ էլ հետաքրքրվում նրանով և չէ էլ ցան-կանում մասնակցել: Հասարակութիւնը մի հիմ-նարկութեան օգտաւէտութեան մասին դատում է նրա տուած պտուղներով: Իսկ ինչ է տուել ձեռնարանը վերջին տարիներում, բացի նրանից, որ ասպարէզ է դարձել սեփական կաշու շահե-րը պաշտող եղբուխների համար: Հ. Հ.

ՆԵՐՓԻՆ ԼՈՒԻՐՆԵՐ

Այսօր, հոկտեմբերի 2-ին, Կովկասեան կառա-վարչապետ իշխան Գ. Գօլիցին պէտք է վերա-դառնայ Գանձակի նահանգից:

Երկրագործութեան միջոցաւ Ա. Նրմոյով առանձին հետաքրքրութիւն է ցոյց աւելի դէպի Կովկասեան կաթնատնտեսութիւնը: Ա. Գալան-թար, որ ներկայ է եղել Պետերբուրգի կաթնա-տնտեսական ցուցահանդէսին և կաթնատնտե-սների ժողովին, զեկուցեց կովկասեան պանիր-ների մասին տեղեկութիւններ: Մինիստրը ու-բախտութիւն յայտնեց, որ Կովկասը կարողանում է արդիւնաբերել բարձր տեսակի շէնյարակաւն պանիրներ:

Թիֆլիսի ձիաքաշի անվերջ հարցը նոր շրջա-նի մէջ է մտնում: Ձիաքաշի ընկերութեան դի-րեկտօր Բօրի դիմել է Թիֆլիսի նահանգաւոր դատարանին, ինչդրելով, որ դադարեցին Թիֆ-լիս քաղաքի նշանակած մրցութիւնը, որ պէտք է տեղի ունենայ այսօր, հոկտեմբերի 2-ին, ձիա-քաշը կապալով տալով նպատակով: Բօրի այն կարծիքն է, որ Թիֆլիս քաղաքը իրաւունք չու-նի մրցութիւն նշանակելու, որովհետեւ բեղդիա-կան ընկերութիւնը դեռ քսան տարի ժամանա-կամից ունի ձիաքաշ իր ձեռքում պահելու:

Ժողովողական լուսաւորութեան միջոցաւ Ն. Բօգօլեպօվի Կովկաս գալու մասին հետեւեալ տեղեկութիւններ գտնում լրագրիցները: Մէջը Մինիստրը Բօստօլից կուղևորվի Սկաւերինօ-դար, այնտեղից Սաւաթօպօլ, Հանքային Ջրեր, Վլադիկավկազ, իսկ այնտեղից Թիֆլիս:

Շուշուց «Тифл. Источек» լրագրին հետադ-րում են հետեւեալը. «Այսօր յայտարարվեց դա-տամիճում Շուշու նախկին գաւառապետ գնդա-պետ Բարանովսկու և նախկին ոստիկանական պրիստաւ Հուսէյնբէգօվի գործի վերաբերմամբ, որոնք դատի էին ենթարկված պապօսնավարու-թեան ժամանակ արած զեղծումներին համար: Դատաւանական ոլարտը վճռեց՝ Բարանով-սկուն և Հուսէյնբէգօվին դրկել բոլոր ի-րաւունքներից և արտօնութիւններից, աստիճան-ներից և շքանշաններից, և աքսորել Տօբօլսկի նա-հանգը»:

Մայրաքաղաքի լրագրիցները հաղորդում են, որ 1904 թ.ի հոկտեմբերի 22-ին կը լրանայ 50 տարի Պետերբուրգի համալսարանում արեւ-ելեան ֆակուլտետ հիմնելու օրից: Այդ անցքը ֆակուլտետի կեանքի մէջ, որ միակ հիմնարկու-

լիս վազօնից, տանդուղքներով բարձրանում, նոր լոյս աշխարհ մտնում և նետվում մարդ-կային մթնոլորտի ուղիւստով մէջ:

Ստորերկրեայ երկաթուղու վրա երթեկող գնացքների թիւը 6000 է. դրանք օրական անց-նում են 100,000 կիլոմետր, հարկիւր հազար կի-լոմետր միայն մի օրվայ ընթացքում... Նրանց կրած ձաժբորդների տարեկան թիւը հասնում է երկու հարիւր միլիօնի, օմնիբուսներին՝ 120 միլիօնի, բէքերի և այլ կառքերին՝ 30 միլիօն, ձիաքաշ երկաթուղու՝ 150,000,000. միայն մի կամուրջով, ինչպէս քիչ առաջ էլ ասացինք, իւրաքանչիւր օր անցնում են 170,000 հետեւակ մարդ: Այս թւերից, կարծես, կարելի է մի դա-ղափար կազմել՝ թէ ինչ մեծ և ահալին շար-ժում, մարդկանց ինչ ահալ հոսանք է տիրում Արեւմտե մայրաքաղաքում:

Եւ այդպէս ամբողջ Լօնդօնը շարժվում, շրբ-ջում, պտտում է անընդհատ, որպէս մի վիթ-խարի անիւ իր առանցքի շուրջը:

Մարդիկ վազում, շտապում են. կեանքը առաջ է ընթանում հսկայական քայլերով. դու-այդ դրում, շոյալիւմ են. դու գտնում ես ամբողջ էութեամբ, որ քո շուրջը կեանքը ետում է, եփ է գալիս նա իր բոլոր վիթբաղաններով... Նրա ալիքները թել ևս գրկելով՝ ձգում, նետում են ընդհանուր հոսանքի մէջ, թել ևս նոր ոյժ, նոր եռանդ, նոր կեանք հաղորդում:

Ս. Շխեանց

